ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1,
Հեռախոս (0231) 6-00-75
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

11.01.2016թ.

թիվ 7

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $77^{1}$-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբեր ամսվա ընդունած որոշումները արձակած կարգադրությունները:

Առդիր 7 /յոթ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1,
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտմբերի 2015 թվականի N 89-Ա

## <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՍՊԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով <<Մերձավանի կոնյակի գործարան>> ՍՊԸ տնօրեն Միքայել Ջուլհակյանի 2015 թվականի դեկտեմբերի 10-ին ներկայացրած դիմումը՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում գտնվող, <<Մերձավանի կոնյակի գործարան>> ՍՊԸ սեփականության իրավունքով պատկանող Երևանյան խճուղու 2-րդ փակուղու N6/1 հասցեում գտնվող 1,70934 հեկտար /կադաստրային ծածկագիր 04-065-0012-0122, սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 17062015-04-0021/ և Երևանյան խճուղու 2-րդ փակուղու N6/8 հասցեում գտնվող 0,06975 հեկտար /կադաստրային ծածկագիր 04-065-0012-0120, սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 06082015-04-0039/ հողամասերը միավորել ու միավորված 1,77909 հեկտար հողամասին տրամադրել մեկ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Մերձավան Երևանյան խճուղի 2-րդ փակուղի N6/1:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի դեկտեմբերի 11
գ. Մերձավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2015 թվականի N90-Ա

## <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետի դրույթներով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված գումարից 2015 թվականի նոյեմբերի 13-ին ձեռք բերված 395 000 ՀՀ դրամ արժողությամբ <<LGGA-B409SMCA>> մակնիշի սառնարանը նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ և օրենքով սահմանված կարգով ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի դեկտեմբեր 11

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1,
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyumerdzavan @ mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտմբերի 2015 թվականի N91-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 17-րդ կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,001 հեկտար հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն մարզ Արմավիրի գյուղ Մերձավան Երևանյան խճուղի N63/բ:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 28

գ. Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

18 դեկտեմբերի 2015 թվականի N16-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի 37-րդ կետը, **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի եկամուտները բարձր ցուցանիշներով հավաքագրելու, աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար, <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> գումարից՝ համայնքի ղեկավարի տեղակալի և գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի նկատմամբ կիրառել խրախուսանք /հավելավճարի ձևով/ մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի դեկտեմբերի 18-ի
N 19-Ա կարգադրության

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Պաշտոնի անվանումը և ծածկագիրը | Գումարի չափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Եսայան Արևհատ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 150 000 |
| 2. | Գևորգյան Հրանտուհի | Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 156 500 |
| Ընդամենը | | | 306 500 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս ( 0231)6-00-25
Էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

28 դեկտեմբերի 2015 թվականի N17-Ա

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ ՀԱՇՎԱՌՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 01/05.1/4816-15 գրությունը, **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում առկա անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով, համաձայն հավելվածի:

2. Հաշվառման աշխատանքները իրականացնել 2016 թվականի հունվարի 1- ից մինչև 15-ը ընկած ժամանակահատվածում և մինչև 2016 թվականի հունվարի 18-ը ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալություն:

3. Հանձնաժողովի գործունեության ժամկետը՝ 2016 թվականի հունվարի 20-ը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 28

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի դեկտեմբերի 28-ի
N 17-Ա կարգադրության

# ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ ՀԱՇՎԱՌՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ - Հ.Գևորգյան՝ աշխատակազմի քարտուղար.

Հանձնաժողովի անդամ – Ա. Գրիգորյան՝ աշխատակազմի առաջատար մասնագետ.

Հանձնաժողովի անդամ - Ա. Գրիգորյան՝ համայնքի անասնաբույժ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**